




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11073

Ա. ԴՐՈՒՎԱՏԻԼՈՎ

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Ա Կ Տ Ի Վ Ը
Յ Ե Վ Ն Ր Ա Հ Ե Տ Տ Ա Ր Վ Ե Լ Ի Ք
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ը

ЗК-ОП

7-94

Գ Ե Տ Հ Ր Ա Տ

1 9 3 2

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

23.07.2013

11073

3K100

7-94

Այ

1 DEC 2009

Ա. ՊՐՈՒՎԱՏԻՈՎ

24 SEP 2006

ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՏԻՎԸ
ՅԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՏԱՐՎԵԼԻՔ
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ը

1407
33793

Պետերբուրգի տպարան
Գրավիր 7434 (բ)
Հրատարակ. № 2155
Պատվեր 2082
Տպրած 5000

Ներածություն

Կուսակցութեան լողունդը համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակուլթյունը վերադառնա դասակարգ վերացնելու մասին՝ վորոշում է մեր գյուղական բոլոր կազմակերպութիւնները (կուսակցութեան, կոմսոմոլի, խորհուրդների և այլն) խնդիրները և ամենորոշ աշխատանքը: Կուսակցութեան այդ մարտական լողունդը հիմնականում արդեն կենսադործված է. գյուղի սոցիալիստական վերակառուցումը հսկա քայլերով առաջ է գնում: «Ու՛ր»-ը արդեն լուծված է հոգուտ սոցիալիզմի: Արմատական փոփոխութիւններ են կատարվում նաև գյուղական պիտանեկազմակերպութիւնների աշխատանքում, հատկապես մասնաշաղկան և համատարած կոլեկտիվացման շրջաններում, վերադառնալով ամենից ավելի յե սրված դասակարգային պայքարը: Այդ շրջանների կազմակերպութիւնների մեջ նկատվում է պիտանեկների (բոլոր յերեսանների) քաղաքական ակտիվութեան հսկայական աճում, ել ավելի ակտիվ մասնակցութիւն գյուղի վերակառուցմանը: Մեծ փոփոխութիւններ են նկատվում նաև մեր յերկրի մշուա բոլոր գյուղական շրջանների պիտանեկազմակերպութիւններում: Դյուղի, մանավանդ կոլտնտեսութիւնների պիտանեկական կազմակերպութիւնների առաջ ծառացել են մի շարք բարդ խնդիրներ—յերեսանների ուսուցումը, աշխատանքը և կենցաղը կազմակերպելու ասպարեզում:

Յեւլ ամեն մի կոլտնտեսական միասնութեան պարզ է պետք է լինի, վոր առանց զարգացնելու իրենց յերեսանների ինքնադործութիւնը, նախաձեռնութիւնը և ստեղծագործական ակտիվութիւնը, մենք չենք կարող լուծել մեր առաջ դրված խնդիրներից մուչ մեկը: Իսկ մանկական մասնանների ակտիվութիւնը զարգացնելու, ուժեղացնելու մեջ հսկայական դեր է խաղում մանկական ակտիվը—յերեսանների զեկավարները:

Այս դատում մենք քննելու յենք այն հարցը, թե ինչ է մանկական ակտիվը, ինչպի՛սի ակտիվ է պետք, ինչպես պետք է պատրաստենք այդ ակտիվը, ինչպես զեկավարել նրանց և նրանց միջոցով բոլոր յերեսաններին:

ԻՆՁ Ե ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՏԻՎԸ

ԻՆՁՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

Դիտեցե՛ք յերեսաների մի խումբ, վորոնք հետաքրքրվում են իրենց համար ընդհանուր մի վորեն գործով՝ լինի դա խաղ, դրոսանք, ձկնորսություն, — կամ դիտեցե՛ք մի խումբ յերեսաների — ընկերների, ընկերակցների, վորոնք ապրում են միասին, սովորում են, և դուք կտեսնե՛ք, վոր այդ խմբերից յուրաքանչյուրն ունի իր ղեկավարները: Նրանց վրէժ վրէժի բնություն, չի նշանակում, նրանք ինքն ըստ ինքյան ջոկվում են կոլեկտիվի կողմից: Ի՞նչն է դրա պատճառը: Յերեսաների խումբը (կոլեկտիվը) հավաքվում է բոլորին հետաքրքրող մի գրադմունքի շուրջը, բայց մեկն ու մեկը յեզել է դրա նախաձեռնողը, նրանցից մեկն ու մեկը առաջին անգամ առաջարկել է հետաքրքիր գրադմունքը և կարողացել է դրանով հետաքրքրել մյուսներին և ահա խումբը կազմվում է այդ գրադմունքի՝ գիցուկ ձկնորսության շուրջը: Չոկվում է նա, ով գիտե, թե ինչպե՛ս պետք է «վորսալ» ո՞ւր են լավ տեղերը և ամենը լսում են նրան և հետևում նրա խորհուրդներին, յենթարկվում են նրա ղեկավարությանը, ամբողջ խումբը հավաքվում է նրա շուրջը:

Կոլեկտիվի համար առանց ղեկավարի աշխատելը դժվար է: Մի պիտներ ճարել է մի գիրք, յենթադրենք «Դասարանում աղմուկ էր» գիրքը: Գիրքը հետաքրքիր է, յերեսաները շատ են սիրում նրան: Յերեսաները լսում են այդ մասին, ամենքն ուզում են կարդալ, և պիտներն առաջարկում է հավաքվել և միասին կարդալ: Պայմանավորվում են ո՞ւր, յե՛րք հավաքվել: Այսպե՛ս, գիրքը ճարող պիտներն իր շուրջն է հավաքում յերեսաների մի խումբ բոլորին հետաքրքրող մի գրադմունքի միջոցով: Այսոր յերեսաներին կազմակերպեց գիրք կարդալու համար, վաղը մի խաղ սարքեց, հետո ձկնորսություն կամ պտույտ անտառում, և արդեն տղան սկսում է ղեկավարել խումբը, և ամբողջ խումբը լսում է նրան:

Այսպե՛ս առաջանում են ղեկավարները:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՈՒՓԸ

Մանկական ակտիվի հիմնական «մատակարարը» պիտներական կազմակերպությունն է: Նա իր գոյություն ամբողջ ընթացքում իր շարքերում աճեցրել է մանկական ակտիվի հսկայական մի բանակ: Չե՞ք վոր մենք ունենք հարյուր հազարավոր կոլնախաղաչներ, ողակավարներ, պատի թերթերի, մանկական ինքնագործության գաղափարային խմբակների և մանկական այլ միավորումների կազմակերպիչներ:

Վերջին յերկու տարիները, վորոնց ընթացքում պիտներական կազմակերպությունը տարել է հարվածային մեծ աշխատանք, հանդիսացան մանկական ակտիվի ընդունակությունների քննության տարիներ,

մի ակտիվ, վորը դասախարակվել է պիտներական կազմակերպության մեջ, վորպես գաղափարների և անկազմակերպ յերեսաների մասնաշների կազմակերպիչ սոցիալիստական շինարարությունը մասնակցելու համար:

Ի՞նչքի կոլեկտիվացման արշավի, կուլտարչավի խորհուրդները վերընտրությունների շտաբները ցույց տվին, վոր մանկական ակտիվը կարող է ղեկավարել վոր միայն ողակը, 15-20 հոգուց բաղկացած մի խումբ, այլ կարող է համախմբել և ղեկավարել հարյուրավոր, հազարավոր պիտներների, գաղափարների և անկազմակերպ յերեսաների աշխատանքը, յեթե ստանա հարկ յեղած աջակցությունը:

«Թեթև հեծելազորի» խմբերը, հացամթերման ջոկատները և հետախույզները, պիտներների կողմից կազմակերպված յերեսաների լայն մասնաշները կոլեկտիվացման ողակն ագիտացրա մղելու համար և այլ որինալներ ցույց են տալիս մանկական ակտիվի ուժը: Մանկական ակտիվը հսկայական դեր խաղաց խորհրդային միության յերեսաների միլիոնավոր մասնաշներին վորքի հանելու գործում՝ մասնակցելու խորհուրդներին վերընտրություններին, կուլտարչավին, բերքի և կոլեկտիվացման համար, յուտիլ-հումքի հավաքման, ինդուստրացման փոխառության տարածման և այլ աշխատանքներում:

Մրանք «մեծ թվերի» ցուցանիշներն են, բայց մանկական ակտիվի ուժը կարելի յե տեսնել նաև կոլեկտիվի առանձին կոնկրետ գործերում: Նայեցե՛ք կոլեկտիվի հաջող կերպով կատարած վորեն աշխատանքին, և դուք կտեսնե՛ք, վոր այդ հաջողությունն ապահովող հիմնական ուժը յեղել է մանկական ակտիվը — կոլկարի գլխավոր հեմարամը:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Մակայն մանկական ակտիվի այս հսկա դերը լավ հասկացել են գյուղական կոլվարներից միայն ջչերը, և նրանց մոտ մանկական ակտիվի հետ տարվելիք աշխատանքը մնացել է գեռ հետին պլանի վրա: Այնինչ հենց մանկական ակտիվի հետ պետք է աշխատել, ջոկել, աճեցնել, դաստիարակել նրան: Ակտիվ յերեսաներ շատ կան, միայն պետք է ողենել նրանց՝ ծավալելու իրենց ուժերը և ընդունակությունները ողենել հասկանալու իրենց պարտականությունները կոլեկտիվներում, ողենել նրանց սովորելու աշխատել և կազմակերպել մյուս յերեսաների աշխատանքը:

Մեծ մասամբ պիտներական ակտիվը (կոլխորհուրդ, ողակավարներ) փոխանակ լինելու կոլվարի հենարանը՝ պիտներների ձևներեցությունը, ինքնագործությունը զարգացնելու համար, դառնում են կոլվարի հասարակ կցորդը, մի մասնիկը, վորը լավագույն դեպքում կոլվարի առաջադրանքները մեխանիկորեն հաղորդում է ողակներին: Չկարողանալով հետևողական և համբերատար կերպով ողենել կոլեկտիվի խորհրդին, պարզել, լուսարանել կոլեկտիվի կատարած խնդիրների խմատն ու եյությունը, սեփական «ինքնագործությունը» լուծելով բոլոր հարցերը, կոլվարը կոլխորհուրդը վերածում է նիստեր գումարող մի մեքենայի: Անկարող լինելով հետևողական և համբերատար կերպով ողենել ողակավարներին ղեկավարելու ողակը — կոլվարը

անձամբ փոխարինում է նրանց, լուսնեղով ողակավարների և ողակ-
ների ակտիվութունը: Այդպիսով ստեղծվում է անլուրջ վերաբեր-
մունք դեպի ողակավարների ընտրութունը, այսպիսով պիտիներեք
անլուրջ վերաբերմունք են ցույց տալիս կոլխորհրդին, այսպիսով թու-
լանում է յերեխաների ստեղծագործական ակտիվութունը, այսպիսով
յերեխաները հիասթափվում են իրենց սեփական ուժերի և ընդունա-
կությունների նկատմամբ:

Անկախան ակտիվի հանդեպ նման վերաբերմունքի հետևանքը
լինում է այն, մեր ողակավարների, կոլխորհրդի նախագահի աշխույժ,
խմբկոչների և այլն վերընտրությունների ժամանակ մենք տեսնում
ենք, մեր հաճախ ակտիվ յերեխաները, իսկական ղեկավարները հրա-
ժարվում են աշխատանքից — «Այնպես կաշխատեմ, բայց դեկավար
չեմ դառնա» — ասում են նրանք:

Ընտրված մանկակտիվի սոցիալական կազմը վորոշ չափով ինձոգ-
ված է: Մատայոցների, անտեսապես լավ ապահովված խավերի յերեխա-
ները և «ճարտգները», «խուսքով» ակտիվիստները ինձոգում են այդ ակ-
տիվի կազմը: Բայց չնայած այդ դրության, ուշադրություն չի դարձ-
վում մանկական ակտիվի վորակին: Կոլխորհրդի մտածում է «միայն թե
ընտրեն» և այդ վորոշում է «գլխի» քննարություններում: Հող չեն տա-
նում, չեն ոգնում, չեն աշխատում «ընտրել ղեկավարներ վոչ թե ար-
տաքին հատկանիշների, այլ յերեխաների իսկական հատկությունների
համար (ստեղծություն, ընկերակցություն, համատեղություն — պար-
ժենկոտություն բացառություն, համատեղություն, հետևողականություն
աշխատանքում և այլն): Իսկ այդ հատկություններն ունեն ամենից շատ
հենց պրոլետարական, բարակ-չքավոր ընտանիքների յերեխաները:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մանկական ակտիվի անում է իր իսկ աշխատանքով: Այս իրողու-
թյունն անփիճելի յի: Բայց յեթե աշխատանք չծավարենք մանկական
ակտիվի հետ, չողենք նրա աշխատանքին, ապա նա կաճի դանդաղ
կերպով և մեզ անհրաժեշտ ուժերը մենք չուտ չենք ստանա:

Ինչպիսի մանկական ակտիվ է պետք մեզ:

ՊԵՏԵՆ ՈՂԱԿՆԵՐԻ, ԿՈՒՆԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Պիտեքական կազմակերպությունը համապարփ կոլեկտիվացման
չըջաններում անում է արագ թափով: Գյուղի կոլեկտիվացումը յերե-
խաների մեջ առաջ է բերում կազմակերպվելու ձգտում: Սա հիմնական
նախադասանն է, վորպեսզի պիտեքական կազմակերպությունն ընդ-
գրվի կոլանտեսության բոլոր յերեխաներին: Կոմսոմոլը ավել է հետե-
յալ լրացուցիչ. «կոլանտեսային բոլոր յերեխաները — պիտեքական կոլեկ-
տիվ»: Այնպեզ, ուր ալիմ մի կոլեկտիվ կա, կլինի 10 կոլեկտիվ: Կոմսո-
մոլական բջիջները և նրանց ջոկած կոլխորհրդեր և պիտեքական կոլեկ-
տիվների կազմակերպչները պետք է իրենց չուրջը համախմբեն այն ակ-
տիվ յերեխաներին, վորոնք հեղինակություն են վայելում թե պիտեք-
ների և թե անկազմակերպ յերեխաների չըջանում և դարձնեն նրանց ի-

րենց ողակականները նոր ողակներ ու կոլեկտիվներ կազմակերպելու և
հետևը ամրացնելու գործում:

Պետք է ամեն վոչ միայն քանակապես, այլև ամրապնդել այդ անումը
գործնական, բոլոր պիտեքների համար հետաքրքրական աշխատանքով:
Առանց աշխատանք կազմակերպչների, առանց յերեխաների կազմա-
կերպչների շատ բան չի կարելի անել: Ողակավարները և կոլխորհրդ-
ների նախագահները հանդիսանում են նման կազմակերպչների հիմնա-
կան կորիզը: Ուստի լավ ղեկավար կազմ, ողակավարներ և կոլխոր-
հրդի նախագահներ պատրաստելու, ամենցնելու գործը հանդիսանում է
մանկական ակտիվի հետ տարվելիք կենտրոնական աշխատանքը:

Կոլխորհրդի նախագահն ընտրվում է ամենից ամուր, ամենից հեղե-
նակավոր պիտեքներից: Դրանումն է նրա հիմնական ուժը: Կոլխորհրդի
առաջործում է նրա հեղինակությունը, նրա ազդեցությունը յերեխանե-
րի վրա վորպես մի մեծ ուժ, վորն ոգնում է կազմակերպելու կոլեկտիվի
աշխատանքը:

Կոլխորհրդի նախագահը կոլեկտիվում ղեկավար է, կոլխորհրդի առա-
ջին ողականը կոլեկտիվի ամբողջ աշխատանքի կազմակերպման մեջ:

1. Նախագահը գումարում է կոլեկտիվի խորհրդի հավաքը: Ղեկա-
վարում է հավաքը, ընտրում և պատրաստում է հարցերը, ոգտագործում
է կոլխորհրդի, ողակավարների, առանձին հարցերում մասնագետների և
կազմակերպչությունների ներկայացուցչների ոգնությունը:

2. Հսկում է հետևում է ողակների և ամբողջ կոլեկտիվի աշխա-
տանքին, ստուգում է խորհրդի և կոլեկտիվի հավաքների վորոշումների
կատարումը:

3. Կոլխորհրդի նախագահը կոլխորհրդի հետ միասին կազմում են կո-
լեկտիվի աշխատանքի պլանը, ղենելով այն խորհրդի ընտրության, և նշում
են կոլեկտիվի ընդհանուր աշխատանքի բոլոր խնդիրների իրագործումը:

4. Նախագահը՝ հաշվառման և յենթաբեկում կոմյունիստական կորիզը
և կոլեկտիվի ամբողջ ակտիվը: Աշխատանքի կազմակերպման մեջ նա
ակտիվ բաժանում է ըստ աշխատանքի մասերի, աշխատելով ապահովել
կոլեկտիվի բոլոր աշխատանքների կազմակերպման հաջողությունը:
Կոլեկտիվի նախագահն ստուգում է խմբերին և առանձին յերեխաներին
տրված բոլոր հանձնարարությունների կատարումը:

5. Կոլեկտիվի նախագահը կոլխորհրդի ոգնությամբ անմիջական կապ է
պահում կոմյունիստիկության բջիջի, կոլանտեսության վարչության,
գյուղխորհրդի, դպրոցի հետ: Նա նրանց առաջ պահանջ է դնում գործ-
նական ոգնություն ցույց տալու պիտեքներին և համաձայնության և
դալիս նրանց հետ ոգնություն իրագործելու մասին:

Ողակը կոլեկտիվում հիմնական աշխատող կոլեկտիվն է: Այն ողակը
լավ կաշխատի, վորի ողակավարը լավ կազմակերպիչ է:

Ողակավարը պետք է դառնա ողակի իսկական ղեկավարը, այսինքն
յերեխաների այն կմբի, վորն ընտրել է նրան: «Նրա խնդիրն է կազմա-
կերպել ողակը աշխատանքի և հանդուր ժամանակ, վորեւորել յերե-
խաներին աշխատելու ցանկությամբ, սովորեցնել նրանց ընտրել իրենց
համար աշխատանք, յերեխաների միջև հաստատել ընկերական սերտ
կապ, լինել նախաձեռնարկ, որինակ ողակի բոլոր նախաձեռնություն-
ներում»:

Ողակավարը պետք է խմանա յուրաքանչյուր աշխատանքի նպատա-

կը, ելուցիւնը, կարողանա հասկանալի կերպով բացատրել այդ իր ուղակին: Նա պետք է իմանա աշխատանքի կազմակերպման յեղանակներն ողակում և կոլեկտիվում: Ողակավարը միայն այն ժամանակ կլինի իր ողակի իսկական ղեկավարը, յերբ նա ավելի ծանոթ կլինի ամենից առաջ կուսակցութեան, կոմյունիստական կուսակցին և աշխատանքին, յերբ նա կկարողանա ճիշտ գիրքավորում ունենալ քաղաքական հարցերում: Ողակավարը պիտի ունենա նաև ունակութիւններ և գիտելիքներ վերոյ պաշար, վերոնք կողմէն նրան կազմակերպել յերեխաներին աշխատանքին, երեխուրտայի, խաղի, յերգի ժամանակ և այլն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԸ

Կլանտեսային բոլոր յերեխաները միանում են մասնակցելու համար կլանտեսութեան ընդհանուր արտադրական աշխատանքին: Յերեխաների ուսումնական-արտադրական բրիգադը լինելու յե յերեխաների աշխատանքի կազմակերպման հիմնական ողակը: Բրիգադները շուտ են կազմակերպւում, բայց նրանց աշխատանքը դանդաղ և կազմակերպւում: Մանկական ուսումնական-արտադրական բրիգադն աշխատում են վրէժ միայն նրա համար, վերաբերել ավելացնի կոլտնտեսութեան արտադրութիւնը, այլև, գլխավորը, վերաբերել այդ արտադրական աշխատանքի միջոցով պատրաստի կլանտեսութեան կառուցողներին վերակալը փոխարինողներ: Դպրոցական աշակերտներին միացնող բրիգադներն իրենց աշխատանքը պիտի կապեն ուսման հետ, դպրոցական ուսումնաշխատանքի հետ: Վրէժ դպրոցական աշակերտներին միացնող բրիգադները պետք է դառնան տրակտորիստների, դաշտաբուծների, անասնաբուծների և այլ արտֆեկտիւնների բրիգադային աշակերտութիւն, կամ մտնեն կլանտեսութեան մասսայական վերակալութիւնների պատրաստման կուրսերը, խմբակները, գիշերային դպրոցները (աշակերտներ, հաշմանդներ, տրակտորիստներ, հավաքուծներ և այլն):

Անվիճելի յե, վրէժ մենք կարող ենք հաջողութեամբ կազմակերպել մանկական աշխատանքը միայն յերեխաների ինքնադրժութեան և ձեռնարկութեան հիման վրա և մանկական ակտիվի ոգնութեամբ: Յուրաքանչյուր ողակ պետք է նշանակի մանկական աշխատանքի կազմակերպիչներ, վրոնք դպրոցականներին և անկազմակերպ յերեխաներին միացնում են մանկական ուսումնական-արտադրական բրիգադներում: Վրոնք ստուգում են մանկական աշխատանքը տնտեսութեան չհամայնացված ճյուղերում: Աշխատակերպիչները (նրանց կարելի յե կոչել աշխատի) կլինեն նախաձեռնարկներ պայքարելու աշխատանքի ճիշտ կազմակերպման համար, պայքարելու յերեխաների աշխատանքի նորմաների, մանկական աշխատանքի որեւնների խախտման դեմ, պայքար կկազմակերպեն յերեխաների չահագործման դեմ, ում կողմից ել վրոնք լինի այդ: Աշխատակերպիչները պետք է լինեն յերեխաների կազմակերպիչներ և նախաձեռնողներ՝ ստեղծելու բրիգադային աշակերտութիւն, կուրսեր, խմբակներ և յերեկոյան դպրոցներ:

Յերբ յերեխաները միանում են ուսումնական-արտադրական բրիգադներին, սրանցից յուրաքանչյուրն ընտրում է իր կազմակերպիչ-բրիգադիւններին: Մանկական բրիգադան պետք է լինի կոլեկտիվ նաև աշխատանքից դուրս՝ ուսման և հանգստի ժամերին, և այստեղ կազմակերպողը լինելու յե բրիգադիւնը:

Բրիգադիւնը վրէժ մի բոլոր յաւերք և մոռանա՝ «կլանտեսային բալոր յերեխաները» պիտի ներական կոլեկտիվում» լողունքը և իր բրիգադային ողակի պիտի ներական կոլեկտիվի աշխատանքին: Բացատրելով նրանց պիտի ներական կազմակերպութեան նախադասը, ելուցիւնը, բրիգադիւնի աշխատում է, վրոնք ամբողջ բրիգադը մտնի պիտի ներական կազմակերպութեան մեջ: Մանկական աշխատանքի կազմակերպիչներին և բրիգադիւններին աշխատանքը պահանջում է նրանցից, վրոնք տեղակ լինեն կլանտեսութեան աշխատանքին, իմանան կլանտեսական աշխատանքի և վարձատրութեան նորմաները: Բրիգադիւնը պետք է իմանա, թե վրոնք և ինչպէս է աշխատելու իր բրիգադը, նա պետք է իմանա բրիգադի աշխատանքի նորմաները և յեղանակները: Բրիգադիւնը պետք է կարողանա պլանավորել և հաշիւ տանել իր բրիգադի աշխատանքը: Բրիգադիւնը պետք է ծանոթ լինի տնտեսութեան այն ճյուղերի և աշխատանքի այն տեսակներին հետ, վրոնք մեջ կկրաւելու յե յերեխաների աշխատանքը և այլն:

ԿՈՒԼՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

Կոլեկտիվացումը առաջ է բերում մասսաների կուլտուրական աճումը և ձգտում դեպի կենցաղի հասարակական կազմակերպումը: Յերեխաներն իրենք պետք է կազմակերպեն իրենց կենցաղը: Մանկական ակումբային սենյակ, հրապարակ, դրադարան, նրնջարան, առանձին սնունդ, ճամբար և այլն կազմակերպելիս միշտ յերեխաներից պետք է լինեն կազմակերպիչները:

Պատի, կենդանի թերթը, զվարճարանների խումբը, ռադիոսիրողների խմբակը պետք է ունենան և ունեն իրենց կազմակերպիչները: Դպրոցում՝ աշկումը, դասկումը, կամավոր ընկերութիւնների պատանի քարեկամների խմբակները և այլ միավորումները կկարողանան աշխատել և գոյութիւն ունենալ պայմանով, վրոնք կազմակերպիչները լինեն յերեխաներից:

Յերեխաների մեջ տարվող կուլտուրական աշխատանքի ուժեղացումը, կենցաղի հասարակական կազմակերպումը պահանջում են և կլանտեսութեան բազմաթիւ նոր կուլտուրակերպիչներ կուլտուր-կենցաղային աշխատանքի քաղմատեսակ ընադավառներում: Այստեղ պահանջվում է մեծ քանակութեամբ մանկական ակտիվ:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ԷՆՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Մանկական ակտիվի հետ տարվող աշխատանքը հետապնդում է այս նպատակները: 1) Բարձրացնել մանկական ակտիվի դարձացման ընդհանուր մակարդակը, լայնացնել նրա մտավոր հորիզոնը, վրաբերել մանկական ակտիվը կարողանա ըմբռնել ամբողջ աշխատանքի քաղաքական խմբակներ, վրաբերել նա կարողանա կազմակերպել մնացած յերեխաներին:

2) Ողբել դարձացնելու մանկական ակտիվի կազմակերպչական ընդունակութիւնները:

3) Զինել մանկական ակտիվը աշխատանքի տարբեր ընադավառները գիտելիքներով և ունակութիւններով, որինակ ռադիոխմբակի կազմա-

Կերպիչը պետք է վորոշ բաներ լավ իմանա ռադիոգործում, և այլն:
Մանկական ակտիվի հետ տարվելիք աշխատանքը կարելի չէ բաժանել յերեք տեսակների:

Մասնաշխատանք, վորի ուղևորվածք մենք բարձրացնում ենք յերեխաների ակտիվությունը, մորելիդացիայի յենք յենթարկում մանկական ակտիվի ուշադրությունը աշխատանքի վորոշ ճյուղերի շուրջը, բացատրում ենք մեր չինարարություն, բաղադրական լինելուցիկ անցքերի և առանձին աշխատանքների բաղադրական իմաստը:

Խմբական պատրաստություն, վորի միջոցով պատրաստվում են աշխատանքի տարբեր ճյուղերի կազմակերպիչներ (ողակ, բրիգադ, պատի թերթ և այլն):

Մանկական ակտիվի ինքնապատրաստություն (ինքնադրդացում), վորի միջոցով մանկական ակտիվը նախ բարձրացնում է իր քաղաքական մակարդակը, կատարելու գործում և իր ունակությունները և գերակշիռները:

Տեսնենք, թե ինչպես պետք է տանել աշխատանքի ամեն մեկ տեսակը մանկական ակտիվի հետ:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոնֆերանսներ, խորհրդակցություններ, մանկական ակտիվի համախառնումներ— ահա մանկական ակտիվի հետ տարվելիք մասնաշխատանք աշխատանքի հիմնական ձևերը և միջոցները:

Կոնֆերանսներ.— Կոնֆերանսները կարող են լինել վոշ միայն չորհանային, մարդային, այլև պետք է դուժարել մանկական ակտիվի կոնֆերանսներ մի կամ ևս կոլտնտեսությունների, խոշոր խորհրդակցությունների, մեծ գյուղերի մեջ— ինչպիսին կոնֆերանսներ, վորոնց հրավիրել հարեան գյուղերի մանկական ակտիվը: Անպայման չպետք է 100-200 հոգի ներկա լինեն կոնֆերանսին, 20-30 հոգով ել կարելի չէ կոնֆերանս գումարել:

Կոնֆերանսը կոլեկտիվների, դպրոցների, բրիգադների, մանկատների և առանձին գյուղերի յերեխաների լիազոր ներկայացուցիչների ժողովն է: Խոշոր գյուղերում կարող են լինել առանձին ռայոնների կամ թաղամասերի ներկայացուցիչները: Կոնֆերանսում ներկայացուցիչները քննարկում են հարցերը և պայմանավորվում են իրենց կազմակերպությունների անունից: Հնարավոր չե և կարիք ել չկա տալ այն հարցերի ցուցակը, վորոնց համար գումարվելու չէ կոնֆերանսը: Կոլվարը, բաղայի նախադաշը, ԼԿՅԵՄ քննիչները, կոլեկտիվի բյուրոն կամ չորջյուրոն պետք է նշեն կոնֆերանսի հարցերը: Կոնֆերանսի ժամկետը նույնպես չի կարելի սահմանել: Կոնֆերանսներ գումարվելու ընդհանուր սկզբունքը կլինի հետևյալը. կոնֆերանսը գումարվում է վոշ քե նրա համար, վոր պետք է կոնֆերանսն անցկացնել, այլ նրա համար, վոր կան հարցեր, վորոնք պահանջում են բնութագրում կազմակերպություն մեջ, վորոնց շուրջը պետք է մոբիլիզացիայի յենթարկել կազմակերպություն կարծիքի:

Գյուղի կոլեկտիվացումը դրել է բաղադրիվ նոր հարցեր:

— Ինչպես պետք է աշխատեն յերեխաները կոլտնտեսության մեջ:

— Ինչպես պետք է կազմակերպվի յերեխաների կյանքը կոլտնտեսության մեջ:

— Մի թե դպրոցը մնալու չէ նույնը, ինչպես եր անհատական տնտեսության ժամանակ:

— Ինչպես պետք է աշխատեն պիոներները կոլտնտեսության մեջ: Յեվ շատ ու շատ ուրիշ հարցեր:

Մի թե չպետք է հրավիրել յերեխաների կոնֆերանս այս բոլոր հարցերը քննելու համար: Չե՞ վոր իրենք՝ յերեխաները պետք է վերահսկողներ իրենց կյանքն ու աշխատանքը կոլտնտեսության մեջ: Ուրեմն նախ պետք է քննության անել այդ վերակառուցման հարցերը:

Վերջենք մի ուրիշ որինակ. Կուբանում կուլակներն սպանեցին մի պիոներ— կոմյերիտականի, վորը կազմակերպել եր յերեխաներին ոգնելու կոլտնտեսության ստեղծմանը: Մի թե նման դեպքում չպետք է հրավիրել այն գյուղի յերեխաների կոնֆերանսը, վորտեղ սպանել են պիոներին, այն գյուղերի յերեխաներին, վորոնք միացել են կոլտնտեսության մեջ: Անկասկած, անհրաժեշտ է: Կոնֆերանսում, հենվելով պիոների սպանության փաստի վրա, պետք է յուսարանել կոլեկտիվացման ելությունը, ինչու՞ կուլակները փորձում են խափանել այն, ցույց տալ դատարարային թշնամու դեմքը և այն յեղանակները, վորոնցով նա պայքարում է կոլեկտիվացման դեմ: Կոնֆերանսի միջոցով պետք է միացնել բոլոր յերեխաներին գործնական աշխատանք կատարելու կոլտնտեսական չինարարության մեջ:

Կարիք չկա շուտ—շուտ գումարել կոնֆերանսներ: Գումարել 3-4 ամիսը մի անգամ, բայց կարևոր հարցի համար լավ նախապատրաստել կոնֆերանսը — այդ ժամանակ կապահովվի նրա հաջողությունը:

Համամիութենական հավաքից առաջ կայացած կոնֆերանսները ավելի չափազանց հետաքրքիր փորձ: Յերեխաներից շատերը կոնֆերանսի որակարգի մասին իմանում էլին միայն կոնֆերանսի բացման ժամանակ: Եստ կոնֆերանսներ լսում էլին մի ժամ տեղ գեկուցումներ, քննում էլին միանգամից 5-6 հարց: Եստ կոնֆերանսներ անցնում էլին այնպես, վոր յերեխաները միայն լսում էլին և «հաստատում» Մանկ. կոմկազմակերպության բյուրոյի առաջարկած բանաձևերը, իսկ կոնֆերանսում գրված հարցերը չէին մշակում: Այս ամենը տեղի յեր ունենում այն կոնֆերանսներում, վորոնք գումարվում էլին առանց լուրջ վերաբերմունքի, առանց վորեն նախապատրաստության: Կոնֆերանսի հարցերը պետք է նախորոք քննել կոլեկտիվներում, դպրոցներում, գյուղի կամ գյուղի թաղամասի յերեխաների ժողովներում, այն յերեխաների կոլեկտիվներում, վորոնք իրենց կողմից պատգամավորներ են ուղարկում կոնֆերանսին: Յերեխաները պետք է նախապես իրենց պատգամավորներին: Կոնֆերանսին մասնակցողներից վոշ մեկը չպետք է մոռանա, վոր ինքը կոլեկտիվի պատգամավորը, ներկայացուցիչն է, դրա համար նա բոլոր հարցերը քննում է և գործում ընդունում և այդ կոլեկտիվի անունից, հաղորդում է այն, ինչի մասին համաձայնություն են յեկել կոնֆերանսից առաջ կայացած ժողովում: Կոնֆերանսից հետո պատգամավորները պետք է հաշիվ տան կոնֆերանսի աշխատանքի մասին այն կոլեկտիվին, վոր ուղարկել է նրանց:

Մանկենի չպետք է մանկական կոնֆերանսները թաղցնել չափա-
հասներեց, ընդհանրապես, պետք է աշխատել, վոր իրենք՝ յերեսա-
ները կոնֆերանսի մասին հայտնեն չափահասներին, վորպեսզի նրանք
ևս իրենց մոտ յերեսաների հետ միասին քննեն կոնֆերանսի հարցերը:
Յեւ վոչ միայն քննեն, այլև դրանից անեն յերեսաների համար ան-
հրաժեշտ գործնական յեղբակացություններ:

Խորհրդակցություններ. — Խորհրդակցությունները դումարվում
են ավելի համախափ, քան կոնֆերանսները, և առանց ընտրություն-
ների: Խորհրդակցությունը հրավիրվում են մանկական ակտիվի դա-
նալան խմբերը — կոլտորհողների անդամները, բրիգադավարները,
խմբավորները, զվարճարարները, դպրոցական ակտիվը և այլն: Խորհրդ-
ակցությունները կարող են լինել հրահանգչական, վորտեղ բացառ-
րում են ակտիվին այն հարցերը, վորոնք պետք է իմանա ակտիվի
ավյալ խումբը: Խորհրդակցությունները կարող են դումարվել ավյալ
հարցի մասին յերեսաների կարծիքն իմանալու համար: Կարող են դու-
մարվել նաև այնպիսի խորհրդակցություններ, վորտեղ թե՛ պարզվում
է յերեսաների տեսակետը և թե՛ միաժամանակ արվում են հրահանգ-
չական ցուցմունքներ, թե ի՞նչ և ինչպե՞ս պետք է անել:

Այս բոլորը յուսարանները որինախնդրվում:
Կազմակերպվում է դյուդառնտեսական վնասառուների դեմ կուլե-
լու կիրակնորդակ: Յերեսաները պետք է մասնակցեն դրան: Գումար-
վում է մանկական ակտիվի — կոլտորհողի անդամների, աշխտների,
դասիտների, բրիգադավարների խորհրդակցություն: Այդ խորհրդակ-
ցության ժամանակ դյուդառնտեսական կամ կոլտեստեսական նախադաճը
հրահանգում է յերեսաներին, յե՛րբ է լինելու կիրակնորդակը, ինչո՞ւ
համար է կազմակերպվում, ինչպե՞ս պետք է պատրաստվել դրա հա-
մար:

Դիցուք յերեսաների ուսումնական-արտադրական բրիգադներում
գործալքումներ կան: Շատ յերեսաներ դուրս չեն դալիս աշխատանքի:
Ինչո՞ւ: Գուցե աշխատանքը ծանր, և, հետաքրքիր չէ, գուցե մեկն ու
մեկը քաղցրայում է աշխատանքը, համոզելով յերեսաներին գործա-
լքում անել: Յեւ ահա գործալքումների պատճառները պարզելու հա-
մար դումարվում է բրիգադավարների խորհրդակցություն: Խորհրդ-
ակցությունը պարզում է գործալքումների պատճառները, և բրիգա-
դավարները հրահանգներ են ստանում — ի՞նչ անել:

Խորհրդակցության հաջողությունը կախված է նրանից, թե վոր-
չափի՞ հարցը պարզ է դրվում այնտեղ և վորչափով՞ է լավ պատրաստ-
ված խորհրդակցության ղեկավարը: Ղեկավարը պետք է հստակ և վա-
րոշ ձևով բացատրի կարգի ելուքը և հայտնի, քե՛ ի՞նչ է պահանջ-
վում խորհրդակցությունից:

Հաճախ այնպես է լինում, վոր խորհրդակցության ժամանակ հար-
ցերը չեն քննվում ակտիվ կերպով — «յո՛ւմ են, և ուրիշ վոչինչ»: Նման
դեպքերում ղեկավարը պարտավոր է մի շարք ուղղություն ցույց
տալով հարցերով և որինախնդրով յերեսաներին դրդել քննելու դրված
հարցը: Պետք է ոգնել յերեսաներին այս կամ այն հարցը քննելիս, հի-
շելով, վոր ձեռք առաջ դրնվում են վոչ թե վարժ ճառախոսներ, և հա-
սարակական գործերում վորձված մարդիկ, այլ միայն յերեսաներ,

վորոնք լի յեն կյանքով և յեռանդով, բայց դեռ չունեն անհամարժեք
և անիրաճ են:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Մանկական ակտիվի հետ տարվող աշխատանքում շատ քիչ է աղ-
տադործվում աշխատանքի այնպիսի հետաքրքիր մի ձև, ինչպես ման-
կական ակտիվի հանդիպումը:

Այդ հանդիպումները, յեթե ճիշտ կազմակերպվեն, շատ բաներում
կարող են չափազանց մեծ ոգնություն ցույց տալ: Վո՞րն է նրանց նշա-
նակությունը:

Կոլեկտիվները, դպրոցներն իրենց գործնական աշխատանքում
կտրված են իրարից: Նրանք բոլորն էլ ունեն իրենց նվաճումները, ի-
րենց թերությունները: Այդ նվաճումներից և թերություններից շատ
բան կարելի չէ սովորել, սակայն միայն այն ժամանակ, յերբ նրանք
հայտնի յեն ուրիշներին: Ակտիվի հանդիպումը պետք է կազմակերպել
հենց իրենց աշխատանքն իրարու ցույց տալու համար: Ինչպե՞ս կարե-
լի չէ կազմակերպել այդ հանդիպումները:

Նիկոլայևսկի կոլտեստեսային փնջի (КОЛХОЗНЫЙ КУСТ) Կարասկի
դյուդի դպրոցում (Հյուսիսային Կովկաս, հանրային ջրերի շրջան)
կազմակերպել են ուսումնական-արտադրական բրիգադներ: Շատ հե-
տաքրքիր մի փորձ, վոր պետք է ոգտադործել նաև ուրիշ դյուդերում, —
Կոմյերտիտիտյան փնջային (КУСТОВАЯ, միացյալ) բջիջը կազմակեր-
պում է ամբողջ կոլտեստեսային փնջի (կոլտեստեսությունների միա-
ցյալ խմբի) մանկական ակտիվի հանդիպում, և այդ հանդիպման ժա-
մանակ նրանք քննարկում են Կարասկի դյուդի դպրոցի փորձը: Կոնկ-
րետ փորձը, լավ, թե վատ, քննելու համար կազմակերպված հանդի-
պումը չափազանց ոգտակար կլինի մանկական ակտիվին: Մանկական
ակտիվի հանդիպումը կարելի չէ անցկացնել բոլոր կոլեկտիվների ընդ-
հանուր աշխատանքի հարցերի շուրջը: Որինակ՝ մանկական ակտիվի
հանդիպումը հետևյալ հարցը քննելու համար — ինչպե՞ս ոգնել դյու-
դի կուլտուրական շինարարությանը: Նման հանդիպման ժամանակ յե-
րեսաները փոխանակում են իրենց աշխատանքի փորձն անդրադիտու-
թյան վերացման, դրքերի, թերթերի տարածման, խրճիթ-ընթերցա-
րանի աշխատանքին ցույց տված ոգնության ասպարիզում և այլն:
Նման հանդիպումներ կարելի չէ անցկացնել ցանքի կամ պանիայի, հա-
ցամթերումների, խորհուրդների վերընտրությունների և բոլոր կոլեկ-
տիվների համար ընդհանուր վորեւե այլ աշխատանքի առթիվ:

Վորպեսզի հանդիպումն ավելի կազմակերպված լինի, պետք է
հանձնարարել 2-3 կոլեկտիվների ակտիվին՝ ղեկուցել իրենց կոլեկ-
տիվների փորձի մասին, իսկ հարցերի քննությունը կկատարվի բոլոր
կոլեկտիվների նյութերի հիման վրա: Նման հանդիպումը կդառնա ակ-
տիվի փոխակամը այն մասին, քե՛ ի՞նչ են անում և ինչպե՞ս են աշխա-
տում իրենց կոլեկտիվները և աղակները: Հանդիպումների միջոցով
ճանկակման ակտիվը կիմանա, ինչպես են աշխատում մյուս կոլեկտիվ-
ները: Այդ կողմի նրան վերցնելու այն բոլորը, ինչ լավ է ուրիշներե
մոտ, և կնախադրուցանի այն սխալներից և թերիքներից, վորոնք նկատ-
վել են նրանց մոտ:

Խմբական սխառնամտիկ պատրաստման մեջ պետք է ընդգրկվի ամբողջ հիմնական ակտիվը — կոլեկտիվների նախագահները, ողակավարները և բրիգադավարները: Բազայի խորհուրդը, կոլեկտիվի խորհուրդը, արտադրական խորհրդակցությունները պետք է լինեն դրա հիմնական ձևերը: Բայց մենք ունենք դեռ մեծ թվով ակտիվ, վորը հանգիստում և կուլտուր-կենցաղային և հասարակական աշխատանքի առանձին ճյուղերի կազմակերպիչ — մանկական պատի թերթերի խմբակների անդամները, փորձնական-գյուտարարական աշխատանքի դաշնական խմբակների կազմակերպիչները, հրապարակում, խրճիթ-ընթերցարաններում աշխատողները, զվարճարարները և այլն: Անհար և բազմաթիվ ընդգրկել հատուկ պատրաստությամբ, սակայն կարևորագույն աշխատանքների կազմակերպիչների հիմնական մասի համար պատրաստությունն անհրաժեշտ է: Նրանց պատրաստման ձևը — կուրսեր և հրահանգչական պարապմունքներ:

ԲԱԶԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կուրսատեսային բազայի խորհուրդը միացնում է պիոներների աշխատանքի հիմնական կազմակերպիչներին: Կոլեկտիվի խորհուրդը նրանց համար պետք է դառնա պատրաստության վայր՝ կազմակերպչական աշխատանքի համար:

Բազայի խորհուրդը պետք է պարզ կերպով բացատրի ակտիվին (բազայի խորհրդի անդամներին և մյուսներին), թե ինչու, ինչպիսիք և ինչպե՞ս պետք է տանել աշխատանքը պիոներների, դպրոցականների և անկազմակերպ յերեխաների հետ:

Բազայի խորհուրդը պետք է տեղյակ լինի քաղաքական կարևորագույն խնդիրներին և կուլտուրական տնտեսական կյանքին:

Նա պետք է իմանա յերեխաների աշխատանքի ընթացքը և արդյունքները, թերությունները, սխալները և նրանց պատճառները:

Բազայի խորհուրդը պետք է տա ակտիվին հիմնական ցուցմունքներ, ինչպե՞ս կազմակերպել յերեխաներին, ի՞նչ ձևերով կոլեկտիվում, դպրոցում առաջիկա այս կամ այն աշխատանքի համար*):

Սակայն բազայի խորհուրդը չպետք է դառնա «հուշարար» ակտիվի համար. ակտիվը չպետք է ասի, թո՛ղ խորհուրդը մտածի մեր փոխարեն, իսկ մենք կկատարենք: Խորհուրդը պարտավոր է սալ դիրքավորվել, յերակետ, նա պետք է ակտիվին տա ախպիսի տեղեկություններ, ցուցմունքներ և նյութեր, վորոնցից ողակելով ակտիվը ինքնուրույն կերպով պատրաստվի իր աշխատանքի համար:

Ուրեմն, բազայի խորհրդի յուրաքանչյուր հավաքի ժամանակ պետք է տեղի ունենա հրահանգչական պարապմունքներ բազայի խորհրդի ան-

դամների հետ: Հրահանգչական պարապմունքները մոտավորապես բազալացած պետք է լինեն հետյալ ծասերից.

1. Մանրամասն բացատրվում է, թե ինչպե՞ս պետք է կոլեկտիվներում և դպրոցներում ձևերով բազայի խորհրդի կողմից նշված աշխատանքին, վորտեղից ձաբել ո՞ժանդակ դրականություն, նյութեր, դաշնական տեղեկություններ, վորոնք կողմեն կազմակերպել աշխատանքը կոլեկտիվում, դպրոցում:

2. Ինֆորմացիա յե տրվում քաղաքական հարցերի, կուրստեսության և ամբողջ յերկրի տնտեսական և կուլտուրական ընթացիկ կյանքի մասին (կոլեկտիվացման, ցանքի, բերքահավաքի, հացամթերունների, անդրադիտության վերացման ընթացքի, կուլանքի յերկրի մասին և այլն): Այդ ինֆորմացիայի միջոցով մենք կոլեկտիվների և աշխատանքի առաջ պետք է պարզենք այն պայմանները, վորոնց մեջ նրանք աշխատելու յեն:

3. Ընկերական գրույցի ժամանակ կոլխորհուրդների նախագահները միմյանց պատմում են իրենց կոլեկտիվների և դպրոցների աշխատանքի ընթացքի, աշխատանքում ձեռք բերված ուշադրավ հաջողությունների կամ նկատված սխալների, անակրեկալ դժվարությունների, կուտակված մուլտ հարցերի մասին և այլն:

Բազայի խորհրդի անդամները պետք է սովորություն դարձնեն թերթերի, ժուրնալների ղեկավար հոդվածների, բորչյուրների, պիոներական բյուրոյի ղեկավարների, առաջադրանքների և այլ կազմակերպությունների փորձին վերաբերյալ նյութերի ընթերցումը և քննությունը: Այս ամենը կողմի աշխատանքի ժամանակ:

ԿՈԼԵԿՏԻՎԻ

Կոլեկտիվի խորհուրդը վոչ միայն կոլեկտիվի ամբողջ կյանքը ղեկավարողն է, այլև ողակավարների պատրաստման դպրոցը: Ողակների աշխատանքից է կախված կոլեկտիվի աշխատանքը: Յերբ ողակները լավ են աշխատում, նշանակում է լավ է աշխատում կոլեկտիվը, բազան, ամբողջ կազմակերպությունը: Կոլխորհուրդը նշում է աշխատանքը: Խորհուրդը կազմում է կոլեկտիվի հավաքի ծրագիրը: Խորհուրդն ամփոփում է աշխատանքի արդյունքները: Բայց աշխատանքը գլխավորապես կատարում են ողակները: Ողակների աշխատանքը մեծ չափով կախված է ողակավարի աշխատանքից: Լավ ողակավարը կարողանում է կազմակերպել ողակն աշխատանքի ժամանակ և ողակը լավ է աշխատում: Այս ամենն առում է, վոր ողակավարների պատրաստման գործը պետք է դրավի հիմնական տեղը մանկական ակտիվի հետ տարված աշխատանքում: Ահա թե ինչու կոլեկտիվի խորհրդի հավաքի մեծ մասը պետք է նվիրվի ողակավարների պատրաստման գործին:

Պատրաստման լավագույն յեղանակը գործնական աշխատանքի միջոցով պատրաստելն է:

Շատ հետաքրքրական է այս տեսակետից «Աղատադրված աշխատանք» գործարանի (Մոսկվա) կոլեկտիվի խորհրդի աշխատանքի որինակը: Այնտեղ ողակավարներին ամառային քոչերի և պտույտներին պատրաստելու համար կազմակերպելին կոլեկտիվի խորհրդի յերկորյա քոչ: Ահա ինչպե՞ս են նկարագրում այդ քոչը:

*) Մանրություն. — Այստեղ մենք բազայի և կոլեկտիվի խորհուրդը վերցնում ենք վորպես ակտիվի դպրոց, այսինքն՝ թե ինչպե՞ս բազայի և կոլեկտիվի խորհուրդը, բացի իր մյուս պարտականություններից, պետք է սովորեցնի ակտիվին աշխատել յերեխաների հետ:

... «Այսօր արտասովոր առավոտ է: Տղերքը կոլխորհրդի նիստին հավաքվում են արշավի պատրաստութուններով, պաշարով, բռնկոտներով, մատիտներով և այլ իրերով լի պայուսակներով: Բերել են փուլը կալիբրի մի հրացան, պլանշետներ՝ տոպոգրաֆական հանումների համար, ամեն մեկն ունի մի դուլդ ազդանշանի դրոշակներ:

Դեռ վաղ է... Սրեր վախժխելով դուրսը բարձրացնում և տները կտուրները հետևել:

— Սորհրդի նիստը հայտարարում եմ բացված, — կատակում է նախագահը, — որակարգի առաջին հարցն է — շարվել...

Յեւ իրոք, բարձր հնչում և «շարվել», և մեր արտասովոր նիստն սկսվում է: Կոլվար Լյուշան բացատրում է մեր յերկուրյա հավաքի խնդիրները: Նա ասում է, դուք պետք է սովորեք լինել յերեսխաների համարձակ ուղեցույցը դեպի բնություն, դուք պետք է իմանաք, ինչպես պետք է անցկացնել քոչերը, դուք պետք է սովորեք կարգալ Քարտեզը, բնորել մարշրուտ, վորոշել քոչի վայրը, պատրաստել կերակուր, դեկավարել այն վայրի ուսումնասիրությունը, վորտեղով անցնում եք յերեսխաների հետ...

«Ետևով, — դրում է այդ կոլեկտիվի կոլվարը, — տրամվայը սլաշում եր, տանելով մեր խումբը քաղաքից դուրս: Ի՞նչնք Մոսկվայի ծայրամասում և մեկ շար իրար հետևից շարժվեցինք դեպի Լենինյան բլուրները (նախկին Վորոբյովի բլուրները, Մոսկվայում): Լողացանք և շարունակեցինք ճանապարհը: Հասնելով «Վորոբյովկայի» խորքերը, մենք բարձրացանք յեղենիններով ծածկված բարձրունքը և նստելով ձորի վրա կախված մի հսկա յեղենու արմատների վրա, սկսեցինք դուլջը: «Ի՞նչ նշանակութուն ունեն պիտներական քոչերը և ինչպե՞ս կազմակերպել նրանց ողակում»:

Պետք է ողապարծել «Այստադրված աշխատանք» դործարանի կոլխորհրդի փորձը: Վոչ մի կասկած չկա, վոր խորհրդի դործնական աշխատանքը լավագույն դպրոցն է ողակավարների համար:

Որինակ, կոլեկտիվը վորոշում է մատնակցել սերմերի տեսակավորմանը կամ ախտահանմանը: Ողակավարներին է բնկնում կազմակերպել այդ աշխատանքը: Կոլխորհուրդը գնում է կայանը և այնտեղ սովորում է, ինչպես տեսակավորել կամ ախտահանել սերմերը:

Վերցնենք ուրիշ օրինակներ: Կոլեկտիվը հանձն է առնում կատարել ցանդային աշխատանքի հաշվառում. կոլեկտիվի խորհուրդը տանում է հրահանգչական աշխատանք՝ բանվորական ուժը, աշխատանքի ժամերը, հերկված հողի քանակը, այդ ամբողջ աշխատանքի դործնական կերպարումը հաշվի առնելու համար:

Կազմակերպվում է պայքար դաշտային վնասատուների դեմ — ողակավարները նախ ծանոթանում են վնասատուների դեմ կովելու յեղանակների հետ — ելի դործնական աշխատանքի միջոցով:

Ողակավարները հաճախ առիթ են ունենում գրույցներ ունենալ ողակի հետ: Ողակավարի անպատրաստության պատճառով գրույցները խախտվում են կամ մի կերպ ծամծամվում: Ողակավարն ինքուրյան կերպ պով քիչ անգամ կարող է պատրաստել գրույցի համար, կամ նյութեր չեն լինում, վորոնք ոգնեյին պատրաստել գրույցը, կամ ժամանակ չկա, կամ ողայմաններ չկան պատրաստվելու համար, ուստի կոլխորհրդում նրանք պետք է պատրաստվեն գրույցի համար: Կոլվարը խորհրդում անց

է կացնելու այն դրույցը, վոր հետո լինելու յե ողակում, իսկ գրույցից հետո տալիս է ցուցմունքներ, ինչպե՞ս անցկացնել գրույցն ողակում, ինչպիսի՞ նյութեր և վորտեղից կարելի յե ձարել գրույցի համար: Իսկ յեթե հնարավորություն կա, կոլվարը պետք է այդ նյութերը բաժանի ողակավարներին հենց կոլխորհրդում: Նույնը կարելի յե անել նաև ուսուցչի, դյուլդատնտիսի, բժշկի, կարմիր բանակայինի և ուրիշների ողանությամբ:

Ողակավարներն ողակներում պետք է անցկացնեն Ֆիզկուլտուրային մարզանքներ, խաղեր, կազմակերպեն յերգեր: Եւ վորտե՞ղ կարող են նրանք պատրաստվել դրա համար, յեթե վոչ խորհրդում: Դրա համար մարզանքներ, յերգեր և խաղեր սովորելը նույնպես պետք է մտնի կոլխորհրդի աշխատանքում:

Ողակավարների, ինչպես և կոլխորհրդի նախագահների համար անհրաժեշտ է իմանալ յուրաքանչյուր կատարվող աշխատանքի եյուլթյունը և ծանոթ լինել քաղաքական անցքերին, տնտեսական և կուլտուրական աշխատանքներին: Այս բոլորի մասին կոլվարը պարտավոր է պատմել նրանց կոլեկտիվի խորհրդում և բացատրել այն, ինչ անհասկանալի յե:

Ողակավարների պատրաստման աշխատանքը մեծ է: Կոլեկտիվների խորհուրդներն ուշ-ուշ են հավաքվում, միջին հաշվով 10 օրը մեկ անգամ: Յեթե բոլորն անցկացնել, շատ յերկար աշխատանք է պահանջվում, յերեսխաները կարող են հոգնել: Ինչպե՞ս անել: Պետք է խորհրդի ամբողջ աշխատանքը կարգավորել դործնական աշխատանքի համար, կազմել պարզամունքների ցուցակ, նշելով, թե վո՞ր հավաքում ի՞նչ դործնական աշխատանք պետք է կատարել ողակավարների պատրաստման համար, կամ հրավիրել կոլխորհրդի հատուկ հավաքներ միայն ողակավարների պատրաստման համար:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանկական ուսումնական-արտադրական բրիգադների բրիգադավարները չեն կարող աշխատել առանց պատրաստության: Նրանք պարզապես անկարող կլինեն կազմակերպել յերեսխաներին, կատարել իրենց պարտականությունները: Բոլոր բրիգադավարներին պետք է հավաքել արտադրական խորհրդակցության մեջ և նրա միջոցով պատրաստել նրանցից յերեսխաների ուսումնական-արտադրական բրիգադների լավ կազմակերպիչներ:

Բրիգադավարը պետք է իմանա ամբողջ կոլտնտեսության արտադրական պլանը: Դրա համար արտադրական խորհրդակցության մեջ նրանք ընտրվում են կոլեկտիվի տնտեսության առանձին ճյուղերի և ամբողջ տնտեսության դարգացման պլանը: Բրիգադավարները պետք են ընտրվում այնպիսի հարցեր, ինչպես ցանքը, բերքի արդյունքները, քաշող ուժ, մեքենաներ, ինյուկտար ձեռք բերելու խնդիրը, տնտեսական չենքերի կառուցումը և այլն: Պետք է ընտրվել վոչ միայն տեղեկանալու համար, այլև գլխավորը, անել դործնական առաջարկներ ըստ եյուլթյան, ողենել կոլտնտեսությանը այդ աշխատանքում: Արտադրական խորհրդակցության մեջ պետք է ընտրվել տնտեսական աշխատանքի բնութագրը: Որինակ՝ ինչպե՞ս են պատրաստվել դաշտ դուրս դալու, ինչո՞ւ չէ կատարված սերմերի տեսակավորման պլանը, ի՞նչ է նպաստել ցան-

1007
33793

բերի ստրաճութան պլանները դերակատարմանը և այլն: Պետք է մտք մեկնել քննութան առնել կոլտնտեսութան վարչութիւն, չափահաս բրիգադավարի, վորեն առանձին աշխատանքի դեկավարի դեկույցը, ալլ յեթե հարկավոր է, կազմակերպել ստուգում, արշավ դեպի վարչութիւնը, աշխատանքի այն վայրը, վորտեղ ճեղք է առաջացել, և տեղի վրա պարզել խորհրդակցութեանը հետաքրքրող հարցերը:

Բրիգադավարները պետք է իմանան, ինչպես է կազմակերպում չափահասների աշխատանքը կոլեկտիվ տնտեսութեան մեջ — աշխատանքի բաժանումը, բրիգադների կազմակերպումը, աշխատանքի դեկավարութիւնը, աշխատանքի արդյունքների հաշվառումը, արտադրանքի նորմաները, հաշվարկները և այլն:

Բրիգադավարը պետք է իմանա, ինչպես կազմակերպել անչափահասների աշխատանքը. աշխատանքի բնութիւնը, ուսուցման կազմակերպումը, աշխատանքի վայրերը, աշխատանքի նորմաները, մանկական աշխատանքի արգելված տեսակները, վարձատրութեանը, պլանավորումը, աշխատանքի հաշվառումը և այլն: Առանց այս ծանոթութեանը բրիգադավարը չի կարող բրիգադավար լինել: Ահա թե ինչու նա այս դիտելիքները պետք է ստանա արտադրական խորհրդակցութեանը:

Առանց տնտեսութեան ռացիոնալացման, առանց մեքենաների, գործիքների ոգնութեամբ աշխատանքի տեխնիկան կատարելագործելու, առանց աշխատանքի ճիշտ կազմակերպման, առանց տնտեսութեան առանձին ճյուղերի մեջ կատարելագործված յեղանակներ կիրառելու, կոլտնտեսութեանը չի կարող դարձանալ:

Անհրաժեշտ է փորձակաւ աշխատանք, գլխաւարարութեան: Բրիգադավարները պետք է իրենց վրա վերցնեն փորձնական աշխատանքի կազմակերպումը, պետք է ծանոթ լինեն տնտեսութեան մեջ մտցված բոլոր նորութեաններին Այս բոլորի հետ բրիգադավարը պետք է ծանոթանա արտադրական խորհրդակցութեան մեջ:

Արտադրական խորհրդակցութեան մեջ քննվում է մանկական բրիգադների և մանկական արտադրական այլ խմբերի աշխատանքը: Ուղղելով կատարված սխալները, քննութեան առնելով նվաճումները, բրիգադավարները կտոյրեն, թե ինչպես պետք է աշխատեն հետագայում բրիգադները և կազմակերպիչները:

Արտադրական խորհրդակցութեանը միացնում է բրիգադավարներին: Բայց չէ, վոր, յերբ բրիգադները դեռ կազմակերպված չեն, բրիգադավարներ չկան: Ապա ովքե՞ր են մտնելու արտադրական խորհրդակցութեան մեջ նախքան բրիգադների կամվելը: Կարիք կա՞ արդյոք արտադրական խորհրդակցութեան: Արտադրական խորհրդակցութեանը՝ վորպես աշխատանքը կազմակերպողների (աշխատակերպիչների) դպրոց, պետք է կազմակերպել նաև մանկական բրիգադների կազմակերպումից առաջ: Աշխատակերպիչների խնդիրն է կազմակերպել յերեխաների ուսումնական-արտադրական բրիգադներ: Աշխատակերպիչները պետք է հետեւեն մանկական աշխատանքի ճիշտ ոգտագործմանը և այլն: Մենք մանրամասն կանգ կառնենք աշխատակերպիչների անելիքների վրա, և կտեսնենք, վոր նրանք անելու չափ բան ունեն: Յեւ ահա իրենց այդ աշխատանքին պատրաստվելու համար աշխատակերպիչներն ուսեղծում են արտադրական խորհրդակցութեան: Յերբ

բրիգադները կազմակերպվում են աշխատակերպիչների ամբողջ աշխատանքն իրենց վրա յեն վերցնում բրիգադները:

ԿՈՒՐՍՆԵՐ

Բազայի խորհուրդը, կոլխորհուրդը, արտադրական խորհրդակցութեանը հանդիսանում են հիմնական ընտրովի ակտիվի պատրաստման վայրը: Սակայն, բացի կոլեկտիվների նախազաննելից, ողակավարներից, կա մեծ թիվով ակտիվ — աշխատանքի մի շարք կարևոր ճյուղերի կազմակերպիչները:

Ինչպե՞ս պատրաստել այդ ակտիվը:

Շատ կազմակերպութեաններում վերջին տարվա ընթացքում կազմակերպվել են աշխատանքի առանձին տեսակների կազմակերպիչների պատրաստման կուրսեր — ղվարճարարների, ռադիո-տիրոջների, մոդելիստների, սանիտարների, պատկերների և այլն: Մանկ. կոմյարժման կենտրոնական տունն անց է կացրել «Հնդամյակի պրոպագանդիստների» կուրսեր: Այս բոլոր կուրսերը տվել են չափազանց հետաքրքիր արդյունքներ: Նրանց ավարտողները դառնում էին յերեխաների լավ կազմակերպիչներ այն ճյուղերում, վորոնց համար նրանց պատրաստել էին կուրսերում:

Ուստի կարճատե կուրսերը պետք է դրավեն իրենց տեղը մանկական ակտիվից առանձին աշխատանքների կազմակերպիչներ պատրաստելու ընդհանուր սխաւմում: Կուրսերում կարելի յե պատրաստել պատի թերթերի խմբագիրներ, ղվարճարարներ, դրականութեան տարածողներ, մանկական ննջարանների կարգապահներ (կոմունաներում), ռադիոխմբակների կազմակերպիչներ, վորճարարներ (ОПЫТНИК), կուրխորհրդի քարտուղարներ, մանկհրապարակներում աշխատողներ և պրոներական աշխատանքի այլ ճյուղերի կազմակերպիչներ:

Հարկւածային աշխատանքների, կամպանիաների ժամանակ նույնպես անհրաժեշտ է պատրաստել կազմակերպիչներ: Հնդամյակի պրոպագանդիստների կուրսեր — Հնդամյակը բացատրելու համար: Անդրապատկութեան վերացման հարկւածային աշխատանքի ժամանակ — վերացնողների կուրսեր: Յանքի դուրս դալուց առաջ հարկավոր են կապի աշխատողներ (СВЯЗИСТ), դրականութեան տարածողներ, հաշվառում կատարողներ — սրանց նույնպես կարելի յե պատրաստել կարճատե կուրսերում: Գործնական աշխատանք, եքսկուրսիաներ, ձեռնարկներըց ոգտվելը, կենդանի պատմութեան կամ դրույց — սրանք են լինելու կուրսային աշխատանքի հիմնական մեթոդները: Այլապես ձանձրալի կլինի յերեխաների համար, աշխատանքը կմանրանա և նրանք քիչ ոգուա կատանան նման կուրսերից: Կուրսերը տասը պարապմունքից — վելի չպետք է լինեն: Պարապմունքները պետք է նշանակել այն ժամանակ, յերբ հարմար է բոլոր կուրսանաների համար, և իհարկե, հընդորյակում մի անգամից վոչ ավելի:

ԱՎՏԻՎԻ ԻՆՏԵՆՍԻՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ ակտիվը չի կարող ընդգրկվել խմբական պատրաստութեան մեջ և պետք է տեւել, վոր միայն խմբական պատրաստութեանը բաժանական չէ մանկական ակտիվի պատրաստման համար: Մանկական ակտի-

վր պետք է դրադիր նաև ինքնապատրաստությամբ: Ակտիվի համար կան հետևյալ թերթերը (նուսերեն «Պիոներական Պրավդա», «Իրուս-նիյե Ռեբյատա», հայերեն՝ «Պիոներ կանչ») ժուրնալներ (նուսերեն՝ «Юный колхозник», «Пионер», «Дружные ребята», «Затейник», հայերեն՝ «Պիոներ-զեկ»): Անհրաժեշտ է նաև կարդալ և մշակել պիո-ներական աշխատանքին վերաբերյալ բրուշուրները: Մանկական հեռա-կա համալսարանն առայժմ դեռ քիչ է ողտազործվում մանկական ակ-տիվի կողմից: Մինչդեռ նրանից կարելի չէ շատ բան սովորել, վոր վերին աստիճանի անհրաժեշտ է մանկակտիվի համար: Այս բոլորը միասին բավարար միջոց է մանկական ակտիվի ինքնապատրաստման համար: Հաճախ ակտիվն ինքնապատրաստությամբ չի դրադվում, վո-րովհետև միջոցներ չկան թերթերի, ժուրնալների բաժանորդագրվելու, զրբեր գնելու համար: Առանց ողնության դժվար է պարագել ինքնա-պատրաստությամբ: Կոլեկտիվը, բազան ինչով կարող են ողնել մանկ-ակտիվի ինքնապատրաստմանը:

1. Կազմակերպեցե՛ք թերթերի և ժուրնալների կոլեկտիվ բաժանոր-դագրություն:

2. Ձեռք բերե՛ք դեթ մի վոլերիկ դրագարան. դրամը կարելի չէ ստանալ կոլտնտեսությունից, գյուղխորհրդից, կամ ծայրահեղ դեպ-քում, կոլեկտիվն ինքը կարող է վաճառակել:

3. Կազմակերպեցե՛ք մանկակտիվի անկյուն, վորտեղ յերեխաները կարողանան գտնել զրբեր, թերթեր և հանդիստ ողտվեն նրանցից:

4. Աշխատեցե՛ք, վոր մանկակտիվը գրվի մանկական հեռակա հա-մալսարանում, նամակադրություն ունենա պիոներական տպագիր թեր-թերի, մանկական կայանների, պիոներկարիներտի կոնսուլտացիաների հետ:

5. Պայմանավորվեցե՛ք մասնագետների և գյուղի կուլտուրական ա-թերի հետ (գյուղատնտես, բժիշկ, ուսուցիչ, հողաչափ և այլն), վոր-պեսզի նրանք մանկակտիվին ողնեն խորհուրդներով, ցուցմունքներով:

ՄԱՆԿԱԿՏԻՎԸ ՅԵՎ ԿՈՄՍՈՄՈՒԼԻ ԲԶԻՁԸ

Մանկական ակտիվը պատանի պիոներներին ամենալավ, ամենա-ամուր մասն է: Այն պիոները, վորն աշխատում է կազմակերպել իր շուրջը գտնվող յերեխաներին, բացատրելով նրանց շինարարությանը թանակցելու անհրաժեշտությունը և ներգրավելով նրանց գործնական աշխատանքի մեջ, ողնում է կոմսոմոլին՝ յերեխաների կոմունիստա-կան դաստիարակության գործում: Այդ նրան մոտեցնում է կոմսո-մոլին: Ահա թե ինչու մանկական ակտիվը հանդիսանում է կոմյերիտ-միության աճման հիմնական բազան ի հաշիվ պատանի պիոներների:

Այս հանգամանքը պարտավորություն է դնում կոմսոմոլին բջիջի վրա շատ ուշադիր մոտենալու մանկական ակտիվին, աճեցնելու այդ ակտիվը նախ և առաջ պրոլետարական, բատրակ-չքավորական յերե-խաներից, ամեն կերպով մոտեցնելով նրան իր աշխատանքին: Կոմյե-րիտական կորիզը պիոներական կոլեկտիվում մի կամուրջ է պիոներ-ների և կոմսոմոլի միջև, վորն ամուր կապում է պատանի պիոներներին կոմյերիտմիության հետ: Անհրաժեշտ է շարունակ մեծացնել կոմյերի-

տական կորիզը, ե՛լ ակտիվ ներգրավել նրան և ամբողջ ակտիվը բջիջի աշխատանքում:

Բջիջը պետք է ակտիվ շուտ-շուտ հավաքի կոմյերիտական կորիզը և ամբողջ մանկակտիվը, վորպեսզի վոչ միայն կոլվարի միջոցով, այլ ուղղակի յերեխաների առջև դնի այն հարցը, թե ինչպե՞ս պիոներ-ները պետք է մասնակցեն կոմյերիտական բջիջի աշխատանքին, ինչպե՞ս է դրությունը կոլեկտիվում, յուսարանի քաղաքական, տնտեսական հարցերը և այլն:

Յեթե բջիջը կամ բյուրոն լսում է կոլեկտիվի հաշվետվությունը, ապա անպայման պետք է կոլեկտիվի աշխատանքը նախ ստուգել ակ-տիվի հետ միասին, և ժողովին կամ նիստին (վորտեղ լինելու չէ կո-լեկտիվի հաշվետվությունը) հրավիրել ամբողջ ակտիվը:

Թեկուզ միայն այս միջոցների կիրառումը մեծ փափասուքյուն կմտցնի կոմսոմոլի բջիջի և ակտիվի փոխադարձերուքյունների մեջ: Իսկ այդ կապահովի կոմսոմոլի ղեկավարությունն ինչպե՞ս յերե-խաների մեջ տարվող աշխատանքի ապարիզում:

ՍՍՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ձե՞ք կարծում, վոր ակտիվի հետ տարված աշխատանքը կարող է հակառակություն առաջ բերել ակտիվի և մնացած պիոներների միջև: Ի՞նչ կանչե՛ք. դուք դրանից խուսափելու համար:

2. Ձեր կարծիքով նորմալ յերեռ՞չթ է առհասարակ, վոր մենք հատուկ աշխատանք ենք տանում մանկակտիվի հետ (պատճառաբանե-ցե՛ք ձեր պատասխանը):

3. Մանկակտիվի հետ աշխատելու վո՞ր մեկըը ծանոթ են ձեզ և նրանցից վորո՞նք դուք մտադիր եք ակտիվ շուտ ողտազործել ձեր աշխա-տանքում յերեխաների հետ:

4. Ինչպե՞ս եք դուք մտադիր հետադաշում կազմակերպել ձեր կոլեկտիվի խորհրդի աշխատանքը:

ԴԱՍԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Л. Бочин, Хозяин организации, «Молодая Гвардия», գիրք 15 կոպեկ:

Гим. Вожакам о вожачестве, «Молодая Гвардия» 2-րդ հրատ. գ. 8 է.:

М. Рейхруд. Пионерская самостоятельность и работа с детактивом, «Молодая Гвардия» 7. 15 է. (նույն գիրքը կրճատ ձևով կա հեռակա կուրսերում):

Григорьев. Первая книга вожатого звена. Կրատ. «Мо-лодая Гвардия» (առանձին գրքով չի վաճառվում, մաճում է պիո-ներական վերնաթուղթյունների գրադարանի կազմում):

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

(9-11 պարապմունք)

Պարապմունքի բնույթ	Մշակման մեթոդը	Ով և անցկացնում
1. Անգրագետը կտարո՞ղ և սոցյալիզմ կառուցել (մի պարապմունք):	ա) Զրույց:	Ուսուցչը կամ հոգևորը:
ա) Ի՞նչ է առել Լենինը անգրագիտության մասին:	բ) Պատմություն իրական կյանքից, ինչպես անգրագիտությունը արդել է իրենց աշխարհայնությանը:	
բ) Անգրագետը ըմբռնում է արդյո՞ք, թե ինչպես և ընթացում շինարարությունը մեր յերկրում: Ի՞նչպես է վերակառուցվելու գյուղը հնգամյակի վերջում:	գ) Անգրագիտության վերացման համաժողովների մասին հավաքի վերլուծումը:	
դ) Զբաղվող գյուղացիներից ով ապրի շուտ կընկնի կուլակային ագիտացիայի աղիկներին: Ի՞նչ է պատճառը, թե անգրագետը:		
ե) Ողջները անգրագիտության դեմ մղվող պայքարին:		
2. Ի՞նչպես է անցնում անգրագիտության վերացումը (մեկ պարապմունք):	ա) Զրույց:	Անգրագիտության վերացումը պետք է անցնի արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, կամ համայնականությանը:
ա) Ի՞նչպես է կազմակերպվում և աշխատում լիկկայանը:	բ) Երևույթներ իրական կյանքից, ինչպես և անգրագետների գործը:	
բ) Ի՞նչպես է գրագետը ուղիղ և իրենց անգրագետին:	գ) Դասավանդողներից մեկի պատմությունը, թե ինչպես է ուղիղ և իրենց անգրագետին:	
3. Ի՞նչպես սովորեցնել անգրագիտին (6-8 պարապմունք):		Անգրագիտության վերացումը:
ա) Դասագրքերի, ուսուցչի լիկկայանի և ձեռնարկների մշակում 1-3-5 (7) պարապմունքներում:		
բ) Դործնական աշխատանք անգրագետների հետ 2-4-6 (8) պարապմունքներում (պարապմունքներից մեկը անպայման պետք է լինի լիկկայանի մշակում, յերկրորդը՝ անգրագետների գործնական ուսուցում):		

Պարապմունքի բնույթ Մշակման մեթոդը Ով և անցկացնում

4. Ի՞նչ է և ո՞ր անուն անգրագիտությունը դեմ պայքարելու համար (մի պարապմունք):

Նշում են յերևույթների մասնակցության ձևերը անգրագիտության վերացման գործում (լիկկայանների կազմակերպումը, շինությունների կազմակերպումը, լիկկայանի և անգրագետների վրա, լիկկայանի և անգրագետների վրա, հայկական լիկկայանի և այլ ձևերով):

ա) Կազմում և ընդունում են յերևույթների մասնակցության ձևերը և անգրագետների վրա, լիկկայանի և անգրագետների վրա, հայկական լիկկայանի և այլ ձևերով:

Կուրսերի յերևույթները, կուրսերը:

բ) Կազմակերպում են և անգրագետների վրա, լիկկայանի և անգրագետների վրա, հայկական լիկկայանի և այլ ձևերով:

Ծանոթություն. — Կուրսերի աշխատանքի պլանը կազմվում է յերևույթների պարապմունքները յերևույթներում համար ներդրումից և անգրագիտության վերացումը կամ ուսուցիչը:

Կուրսերի որինակելի (մոտավոր) պլանը դրվում է ամենից առաջ այն նպատակով, վերադառնալ ցույց տրվի կուրսերի աշխատանքի և ծրագրերի կազմության սկզբունքները:

Վճարում է այս ծրագրի առանձնահատկությունը:

1. Թեմաների պարապմունքներ և հատկություններ: Թեմաները մատչելի և հասկանալի յեն յերևույթներին:

2. Ընտրված են ամենաանհրաժեշտ թեմաները:

3. Կուրսերի աշխատանքի ակտիվ մեթոդը: Հիմնական առիթ անգրագետների ուսուցման մեջ բռնում է գործնական աշխատանքը, պատմություն, երկուստեք և գրություն:

4. Կուրսի վերջում կազմվում է յերևույթների մասնակցության կոնկրետ պլանը: Կուրսանտներն իրենց մեջ բաժանում են պլանի կատարման աշխատանքը: Դրանից հետո յերևույթներն են չեն առի — «Կուրսերը վերջացրին, բայց չգիտենք ինչ պիտի անենք»:

Կուրսերը պարբերական հավաքներ են մի շարք (8-10) պարապմունքներով վերեն մի աշխատանքի պատրաստվելու համար, առկայի կարելի յե առանձին աշխատանքների կազմակերպչներ պատրաստել նաև 1-2 պարապմունքում: Դրանք արդեն կլինեն վո՞ր թե կուրսեր, այլ հրահանգչական գործնական պարապմունքներ:

Հրահանգչական պարապմունքներ կարելի յե գումարել ֆիզիկատնտեսական մարզանքների, խաղերի և յերևույթների, ողակի աշխատանքի պլանները կազմելու, աշխատանքի հաշվառման, թուղանքների որվա պատրաստության, շարքի, գրքերի տարածման, պատի թերթի և այլ աշխատանքների համար: Հրահանգչական պարապմունքներն անպայման պետք է յինեն զուտ գործնական, առանց ավելորդ «ճառախոսություն»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Ինչ է մանկական ախտիվը	4
Մանկական ախտիվի պատրաստումը	6
Մասնայական աշխատանքը	10
Խմբական պատրաստություն	14
Ստուգիչ հարցեր	21
Դասի լրացուցիչ գրականություն	22
Հավելված	

Ստացվել է 4. ՍԵՆՏԵՄԵՐ, Ա. ՀՈՒՂՈՒԹՅԱՆ

Հանձնված է արտադրության 23/III 1932 թ. ՇՏ. Փ. Ե.
Ստորագրված է տպագրելու 25/IV 1932 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0195604

ԳԻՆԸ 20 ԿՈՊ. (1½ Ժ.)



С. ПРОХВАТИЛОВ

ДЕТСКИЙ АКТИВ И РАБОТА С НИМ

Госиздат ССР Армении
Эривань 1932